ԱՄՆ-Ի ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Դ. Պ. ՍՐԱՊՅԱՆ

Ամերիկայի հետ հայերի առաջին ծանոթությունը սկսվել է դեռևս XVII դ. սկզբներին, երբ Վիրգինիայի գաղութի կառավարիչ Ջորջ Յարդլին 1618 կամ 1619 թթ. Ամերիկա է տանում իր սպասավորներից մեկին՝ Մարտին Հայ անունով[1]։

Վիրգինիայում Մարտին Հայը ընդունում է բրիտանական քաղաքացիություն[2]։ 1622 թ. նա վերադառնում է Անգլիա և 1623 թ. դառնում Լոնդոնի «Վիրգինիա» ընկերության անդամ[3]։

1653 թ. Վիրգինիա գաղութի ղեկավար-անդամ Էդուարդ Դիքսը մետաքսագործությունը տեղում զարգացնելու նպատակով, Վիրգինիա է տանում երկու շերամապահ հայերի[4]։ Հայերի հմուտ շերամապահներ լինելու մասին նա լսել էր իր հորից, որը ժամանակին Իուսաստանում Անգլիայի դեսպանն էր։

Այդ հայերից մեկի մասին աղբյուրները լռում են։ Մյուսը՝ «Ջորջ Հայը», հավանաբար, ցանկություն է հայտնել հեռանալ Ամերիկայից՝ Վիրգինիայի գաղութի ժողովը նրան այնտեղ պահելու համար 1656 թ. որոշում է կայացրել, որով երկրից չհեռանալու և մետաքսագործությամբ զբաղվելու պայմանով նրան թույլատրվել է ունենալ 4000 ֆունտ ծխախոտ[5]։

XVII դ. վերջին և XVIII դ. ընթացքում հայերի Ամերիկա գնալու մասին տեղեկություններ չկան։

Հայերի մասսայական գաղթը Ամերիկա, որ սկսվում է անցյալ դարի 30-ական թվականներին, պայմանավորված էր ոչ միայն մայր հայրենիքում տիրող ծանր վիճակով, այլև ԱՄՆ-ում արդյունաբերության բուռն զարգացման ընթացքով։ Ամերիկյան կապիտալիստները տարբեր երկրներում իրենց ազդեցությունը ուժեղացնելու և էժան բանվորական ուժ ձեռք բերելու նպատակով ստեղծել էին գործակալություններ, որոնք հաստատվելով այս կամ այն երկրում աշխատում էին իրականացնել իրենց տերերի ցանկությունը։ Դրանցից էր 1810 թ. ստեղծված ամերիկյան բողոքական միսիոներական «Դի Ամերիքն Բորդ ըվ Քոմիշնըրզ ֆոր Ֆորին Միշըն» (Օտարերկրյա միսիայի լիազորների ամերիկյան խորհուրդ) ընկերությունը, որը 1830 թ. հաստատվելով Թուրքիայի հայաշատ քաղաքներում և Արևմտյան Հայաստանում, քաղաքակրթություն և լուսավորություն տարածելու քողի տակ, ամերիկյան արդյունաբերողների համար էժան աշխատող ձեռքեր էր հավաքագրում։ Ամերիկյան կոնգրեսը,

---

[1] Տե՛ս The Records of the Virginia Company of London, Washington, 1906, հ. 1, էջ 633։

[2] Տե՛ս M. V. Malcom, The Armenians in America, Boston, 1919, էջ 51։

[3] Տե՛ս The Records of the Virginia Company of London, Washington, 1906, հ. 2։ էջ 477—478։

[4] Տե՛ս Ed. Eggleston, The Beginers of a Nation, New-York, 1899, էջ 77։

[5] Տե՛ս M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 56։

խրախուսելով գործակալություններին, 1864 թ. ընդունեց հատուկ օրենք, նրանց թույլատրելով պայմանագրով բանվորներ վարձել[6]։

Եվ այնուամենայնիվ, 1834—1854 թթ. հայերը ԱՄՆ էին գնում մեծ մասամբ ուսանելու և արհեստների մեջ հմտանալու նպատակով։ Նրանց գերակշռող մասը հետագայում վերադառնում էր հայրենիք։

Այցյալ դարի 70—90-ական թվականներին, սուլթանական սաստկացող բռնությունների հետևանքով հայերի թիվը ԱՄՆ-ում աճում է։ 1834—1894 թթ. «Ամերիկայի գաղթականական բյուրոն» գաղթականներին ցուցակագրել է ըստ այն երկրների, որտեղից գաղթել էին նրանք։ Ուստի, այդ շրջանում գաղթողներին դժվար է զանազանել ըստ ազգային պատկանելության։ 1898 թ. հետո «Ամերիկայի գաղթականական բյուրոն» որպես ներգաղթողների դասակարգման գործնական սկզբունք ընդունում է նրանց ազգային պատկանելությունը։ Բյուրոյի տվյալների համաձայն, 1834—1894 թթ. Թուրքիայից ԱՄՆ է գնացել 9472 մարդ, որից 4777-ը ասիական, իսկ 4695-ը՝ եվրոպական մասից։ Ամերիկահայ պատմաբան Վարդան Մալքոմի կարծիքով սրանցից մոտ 4000-ն են հայ եղել, որոնցից 1000-ը վերադարձել են, իսկ 3000-ը՝ բնակություն են հաստատել ԱՄՆ-ում[7]։ Հետագայում՝ 1894—1898 թթ., «Ամերիկյան գաղթականական բյուրոյի» տվյալներով, ԱՄՆ են գաղթել 15923 հայեր. ինչպես ենթադրվում է, սրանց մեծ մասը կոտորածից փախածներն էին։ 1899—1917 թթ. հայ գաղթականների թիվը ԱՄՆ-ում հասնում է 55057-ի։ 1917—1918 թթ. հայերի քանակը ԱՄՆ-ում արդեն կազմում է 77980 մարդ, որոնցից 12443-ը՝ կանայք և երեխաներ[8]։

Այս տարիներին հայերն ԱՄՆ էին գաղթում ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանից։ Արևելյան Հայաստանից, մեծ մասամբ Շիրակից, բազմաթիվ հայեր են գաղթել ԱՄՆ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանց թիվը ԱՄՆ-ում բազմապատկվում է։ Պատերազմից հետո Շիրակից գաղթած հայերի մեծ մասը մնում է ԱՄՆ-ում և հաստատվում Լոս-Անջելոսում[9]։

ԱՄՆ գաղթած 55057 հայերից 17391-ը հաստատվել էին Նյու-Յորքի նահանգում, 1492-ը՝ Մասաչուսետ նահանգում, 4927-ը՝ Ռոդ-Այլենդում, 2002-ը՝ Պենսիլվանիայում, 1580-ը՝ Քոնեքտիկուտում, 1371-ը՝ Միչիգանում, 1184-ը՝ Վիսկոնսին նահանգում և 1000-ից ավելի քիչ՝ մյուս նահանգներում[10]։

Հաց և աշխատանք գտնելու հույսով ԱՄՆ հասած գաղթականները, այդ թվում հայերը, դաժանորեն շահագործվում էին։ Լեզվին ու սովորություններին անծանոթ, սովից, անգործությունից հուսահատ՝ նրանք թափառում էին քաղաքից-քաղաք, գործարանից-գործարան՝ աշխատանք գտնելու հույսով[11]։

Գաղթականության հոսանքը դեպի ԱՄՆ սրում էր նաև բնակարանային հարցը։ Գաղթականները ապրում էին սարսափելի պայմաններում։ Բնակաբանային վատթար պայմանները, կեղտոտությունը և հակասանիտարական

---

6 Տե՛ս Л. И. Зубок, Очерки Истории США (1877—1918), М., 1956, էջ 203։

7 Տե՛ս M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 64։

8 Նույն տեղում, էջ 55—56։

9 Տե՛ս S. Kalolan, The Immigration of Armenians of Shirak to America, Los Angeles, 1950.

10 Տե՛ս M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 71։

11 «Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 193։

վիճակը ծնում էին բազմաթիվ հիվանդություններ։ Հաճախ հայերը մի քանի տասնյակներով տեղավորվում էին փոքրիկ սենյակներում. «Վաթսունհինգ հոգի միասին կասրեին ոչխարի պես»— գրել է Ռուբեն Մինասյանը, որը Պեպերի միսիոներական վարժարանի աշակերտների հետ 1867 թ. գնացել էր Ամերիկա[12]։ Նույնն է գրել նաև ոմն Գևորգյան, որը մի խումբ հայ գաղթականների հետ տեղավորվել էր մի տան մեջ, «որուն մեկ կողմը ախոռ էր, մյուս կողմը գինետուն, երեք հարկանի տան մը մեջ, մուխ, ծուխ, կմթնցնեին... և ստիպված էինք ցորեկ ատեն լույս վառել...»[13]։

Հայ գաղթականները իրենց թուխ գույնի պատճառով հաճախ ենթարկվում էին ռասսայական խտրականության։ Այսպես օրինակ, Միքայել Թոփհանելյանը, որը 1862 թ. գաղթել էր ԱՄՆ, 1863—1864 թթ. մի քանի անգամ վարսավիրանոցներից և ճաշարաններից վռնդվել է իբրև սևամորթ[14]։

Հայերի նկատմամբ ռասսայական խտրականության արտահայտություններից էր 1924 թ. մայիսի 8-ին Միացյալ Նահանգների շրջանային դատարանում (Պորտլենդ, Օրեգոն) տեղի ունեցած խայտառակ դատավարությունը, որը պաշտոնապես կրում էր «Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդդեմ Թադոս Օ. Գարթոզյանի» անունը։ Ամբաստանողը Ամերիկայի Միացյալ Նահանգներն էին, իսկ ամբաստանյալը՝ «թեպետ երևութապես սոսկ անհատ մը, իրականապես Թադոս Գարթոզյան անվան ներքև հայ ազգն էր»[15]։ Այս դատավարության ժամանակ հայերը մեղադրվում էին ասիական ծագում ունենալու համար և ամերիկյան 1790 թ. սահմանադրության համաձայն «ճերմակ ազատ անձերուն շրջանակից դուրս էին մնում։ Հետևաբար, ըստ օրենքի նրանք չէին կարող ամերիկյան քաղաքացի դառնալ, իսկ մինչ այդ արդեն քաղաքացի դարձած հայերն էլ զրկվելու էին այդ իրավունքից։ Հայերի իրավունքի պաշտպանությամբ հանդես եկան աշխարհագրության և քաղաքատնտեսության պրոֆեսոր Պոլ Ռոհերբախը (Բեռլին), Հարվարդի համալսարանի մարդաբանության պրոֆեսոր Ռ. Պ. Դիքսոնը, Կոլումբիայի համալսարանի մարդաբանության պրոֆեսոր Ֆ. Պուաղին և ուրիշներ, որոնք ապացուցեցին հայերի նկատմամբ եղած մեղադրանքի սնանկությունը։ Դատավարությունը, որը տևեց մինչև 1925 թ. հուլիսի 27-ը, ավարտվեց հօգուտ հայերի[16]։

ԱՄՆ գաղթած հայերի մեծամասնությունը աշխատավորներ էին։ Նրանցից 21526-ը գյուղացիներ և բանվորներ էին, 2208-ը՝ արհեստավորներ, իսկ 3386-ը՝ սպասավորներ[17]։ Նրանց մեծ մասը աշխատանքի էր ընդունվում ցածր վարձատրվող և աշխատանքային վատ պայմաններ ունեցող գործարաններում ու հանքերում։ Մյուսները զբաղվում էին զանազան արհեստներով՝ մետաքսագործությամբ, գորգագործությամբ, հյուրանոցների ու ճաշարանների սպասավորներ էին։ Պենսիլվանիայում հայերի գերակշիռ մասը աշխատում էր Պենսիլվանիայի երկաթուղային ընկերության զանազան ճյուղերում, իսկ մյուս մասը՝ ածխահանքերում։ Կլիվլենդում, Գրոնդ Ռեյփինդսում և Չիկագոյում հա-

12 Նույն տեղում, էջ 30։

13 «Պայքար», 28. IX. 1930։

14 «Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 30։

15 «Հայ քաղաքացիական փորձադաշտը Մ. Ն. Շրջանային դատարանին մեջ» (Պաշտոնական Ատենագրություն), Պոսթոն, 1925, էջ 5։

16 Նույն տեղում, էջ 5—12։

17 Տե՛ս M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 81—82։

յերը աշխատում էին մետալուրգիական ու մեքենաշինական գործարաններում և կահույքի ֆաբրիկաներում[18]։ «Հայ գաղթականները Ամերիկայի մեջ,— գրում է Ճիզմեճյանը,— առաջին առթիվ կգտնեն գործարաններ և գործավորական կյանք։ Ածուխ ու փոշի, երկաթի պայքար, վիշապի պես ֆշշացող մեքենաներ, բարձրաբերձ ծխնելույզներ, ցցված ամեն գյուղ ու քաղաք։ Եվ ասոնց մեջ օրական 10—12 ժամ չարաչար ու քրտնաջան աշխատություն»[19]։

1860—1870 թթ. հայ աշխատավոր մասսան հավաքվում էր Մասաչուսեթ նահանգի Ուստր քաղաքում և աշխատում Մոենի և Ուոշբըրնի երկաթաթելի գործարանում։ Դրա պատճառն այն էր, որ Ուոշբըրնը և Մոենը կապ ունենալով միսիոներների հետ, ֆինանսավորում էին նրանց էժան աշխատանքային ձեռքեր ստանալու համար[20]։ «Պ. Մոենի և Ուոշբըրնի ձեռքով հիմնված այդ երկաթթելի գործարանը, ուր ամեն ազգե 7000-ի մոտ գործավորություն մը կաշխատի իր հնոցներով, իր ինքնաշարժ ձուլարաններով, իր պողպատի փուռերովն ու կտրող գործիքներով, ճշմարիտ դժոխքի մը տպավորություն կթողուն այցելողին վրա։ Եվ իբրև այդ՝ հայ գործավորության արյունն ու միսը ծծելև վերջ, անխռով հանդիստեսը եղած է տխուր ու քստմնեցնող բռնագործություններու, զգայացունց արկածներու, ողբերգական մահերու, տառապագին անդամահատություններու»[21]։

Աշխատանքային պայմաններն ամերիկյան գործարաններում հրեշավոր էին։ Բայց բողոքել դրա դեմ, նշանակում էր գործազուրկ դառնալ։ «Պայքար» թերթը ոմն Արթին էֆենդիի մասին գրել է, որ նա աշխատանքից «երբ տուն կդառնար, դժվար էր զանազանել ճերմակ, թե սև ցեղին պատկանելը։ Արթին էֆենդին օր մը հանդգնություն ունեցած էր շաբաթականի հավելում խնդրել իր վերակացուեն, տրված պատասխանն այն եղավ, որ ունեցած գործն ալ կորսնցուց»[22]։

Կառավարությունն իր օրենքներով կանգնած էր գործարանատիրոջ թիկունքում։ Պենսիլվանիայի Գերագույն դատարանի որոշման համաձայն, բանվորների՝ ԱՄՆ-ի սահմաններից դուրս բնակվող ընտանիքը աշխատանքի ժամանակ բանվորի զոհվելու դեպքում զրկված էր դրամական նպաստ պահանջելու իրավունքից[23]։

Լեզվին ու բարքերին անծանոթ լինելը հայերին սկզբում ստիպում էր կըղզիանալ ոչ միայն շրջապատից, այլև միմյանցից։ Դրան նպաստում էր նաև Հայաստանի և Թուրքիայի զանազան մասերից գաղթած հայերի սովորությունների տարբերությունը։ Հետագայում, ԱՄՆ-ում հայերի քանակի աճմանը զուգընթաց, ԱՄՆ-ի հայաշատ քաղաքներում կազմավորվում են հայկական ինքնուրույն համայնքներ, որոնք այնուհետև վերածվում են գաղութների[24]։ Դը-

---

18 Նույն տեղում, էջ 83—85։

19 Ս. Գ. Ճիզմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, Ֆրեզնո, 1930, էջ 3։

20 Նույն տեղում, էջ 4։

21 «Ամերիկահայ Տարեցույց», 1913, էջ 41։

22 «Պայքար», 25. IX. 1930։

23 Տե՛ս «Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 196։

24 Դրանցից էր Պրովիդենսի հայկական գաղութը, որը հիմնադրվել էր 1878 թ.։ Այս գաղութի առաջին բնակիչներն էին Ա. Մավյանը, Մ. Մարգարյանը, Ղ. Ղազարյանը, Տ. Խոհարյանը և այլն։ 1890 թ., ոչ պաշտոնական տվյալներով, Պրովիդենսում հայերի թիվը եղել է 35, 1897 թ.՝ մոտ 500։ Արսեն Վեհունու հաշվումներով 1902 թ. գաղութում եղել է մոտ 1350 հայ, իսկ 1910 թ.՝ 2500 («Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 35—36)։ Կալիֆորնիայի հայ-

բանց անդամներն ազգապահպանության, ներքին դժվարությունների դեմ պայքարելու ու իրենց հայրենիքի ազատությանն աջակցելու նպատակով հիմնում են դանազան միություններ։ Դրանցից առաջինը 1886 թ. կազմակերպված Նյու-Յորքի Հայկական Միությունն էր[25]։ Միության նպատակն էր իր անդամների սրտում վառ պահել հայրենիքի սերը, օգնել հիվանդներին, գործազուրկներին, աջակցել Հայաստանում լուսավորության տարածմանը և այլն։

Բազմաթիվ ընկերություններ կրում էին այն վայրերի անունները, որտեղից հայերը գաղթել էին ԱՄՆ[26]։ Ամերիկահայ կանայք նույնպես ունեին իրենց կազմակերպությունները։ Դրանցից էր «Կարմիր Խաչի միությունը», որի անդամները հաճախ հանգանակություններ էին կատարում և ստացված գումարը ուղարկում հայրենիք՝ սովից տառապող ու կոտորածներից հազիվ փրկված իրենց հայրենակիցներին։

Բացի վերոհիշյալ միություններից և ընկերություններից, հայկական գաղութներում հետագա տարիներին սկսում են գործել նաև հայ քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպությունները։ Դրանցից առաջինը Հնչակյան կուսակցության Ուստրի մասնաճյուղն էր, որը 1890 թ. հիմնադրել էր Յ. Շեբերջյանը[27]։

ԱՄՆ անցած հայերի մեծամասնությունը գրագետ էր։ «Ամերիկայի գաղթականական բյուրոյի» տվյալների համաձայն, 1899—1910 թթ. ԱՄՆ-ում հաստատված հայերի միայն 23,9%-ն էր անգրագետ։ ԱՄՆ-ի գործարաններում աշխատող բանվորների գրագիտությունը որոշելու նպատակով անցկացված հաշվառումը վկայում է, որ այնտեղ աշխատող հայ բանվորների 92,1%-ը գիտեր կարդալ, իսկ 90,5%-ը՝ դրել ու կարդալ (մայրենի լեզվով)[28]։

Նույն բյուրոյի հաղորդագրությունների համաձայն 1910 թ. ԱՄՆ-ի 37 միջնակարգ դպրոցներում սովորում էր 1031 հայ աշակերտ, իսկ կոլեջներում ու համալսարաններում՝ 29 հայ ուսանող։ 1916 թ. ԱՄՆ-ի դանազան բարձրագույն հաստատություններում հայ ուսանողների թիվը արդեն հասնում էր 234-ի[29]։

Սկզբնավորվելով XIX դ. երկրորդ կեսին, ամերիկահայ գաղութը հետագայում դարձավ սփյուռքահայության բազմամարդ կենտրոններից մեկը։ Հայաս-

---

կական գաղութը գարասկգբին ընդգրկում էր հետևյալ քաղաքները. Ֆրեզնո, ուր բնակվում էր 4500 հայ, առաջինն այստեղ են եկել Սերորյանները, 1881—1882 թթ., Լոս-Անջելոս՝ 1100 (առաջինը՝ Թաշճյանների ընտանիքը, 1890 թ.), Սան Ֆրանցիսկո՝ 250 (առաջին հայը՝ Մ. Մարգարյան, 1883 թ.), Ռեդ՝ 300, Ֆաուլը և շրջակայքը՝ 500, Թուլարա՝ 75, Սաքրամենտո՝ 50, այլ քաղաքներում 150 հայ, Նութահի նահանգ՝ 80 հայ (առաջին հայը՝ Ա. Ռանդյան 1904 թ.), Թագոմա (Վաշինգտոնի նահանգ)՝ 12 հայ, Սիրը (Վաշինգտոնի նահանգ)՝ 38 հայ։ («Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 78—81)։

25 Տե՛ս «Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 170։

26 Դրանցից են՝ «Հյուսեյնիկի ուսումնասիրաց ընկերությունը», որը հիմնադրվել է 1888 թ., ու իր մասնաճյուղերը ուներ Ուստրում, Փրովիդենսում, Նյու-Հեյվնում, Ուայտնսվիլում, Չելսիում, Հարթֆորթում և Քեմբրիջում, «Քսերիկի երկսեռ ուսումնասիրաց ընկերությունը»՝ 1888 թ., որն իր մասնաճյուղերն ուներ ԱՄՆ-ի մի շարք հայաշատ քաղաքներում։ Ուստրում «Կաճառ Հայկական»՝ 1888 թ. և «Մորենիկ Ուսումնասիրաց Ընկերությունը»՝ 1890 թ.։ Նյու-Յորքում «Արարատյան Գունդը»՝ 1890 թ. և ուրիշ բազմաթիվ միություններ («Ամերիկահայ Տարեցույց», 1912, էջ 170)։

27 «Հնչակյան Տարեգիրք», 1931, էջ 19։

28 Տե՛ս M. V. Malcom, նշվ. աշխ., էջ 104—105։

29 Նույն տեղում, էջ 110—112։

տանում սովետական իշխանության հաղթանակից հետո, սփյուռքի մյուս հատվածների նման, ամերիկահայ զանգվածները նույնպես իրենց հայացքը դարձրին դեպի նորաստեղծ սոցիալիստական հայրենիքը, այն համարելով հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վերածննդի հուսալի ապավենն ու հենարանը։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В США

Д. П. СРАПЯН

Резюме

Первое появление армян на территории Америки исследователи относят к началу XVII в. Массовая же эмиграция армян началась в середине XIX в. Число эмигрантов в 1870 г. составило около 55 человек, 1875 г.—70 человек, а уже в 1918 г.—77.980 человек. Из них 21.526 человек были рабочими и крестьянами, а остальные — ремесленники и люди других профессий.

Естественно, жизнь армян-эмигрантов в капиталистической действительности была невыносимой. Армяне сталкивались с рассовой дискриминацией. Тяжелыми были условия быта и труда. Права эмигрантов вообще, и армян в частности, всячески ограничивались местными властями.